ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2024 թվականի № 396-Ա

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2023 թվականի դեկտեմբերի 29 -ի № 472-Ա որոշումը և *Նորայր Միքայելյանի*՝ 2024 թվականի հոկտեմբերի 4-ի № 147 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Նորայր Միքայելյանին*** տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ տասն աշխատանքային օր՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ից 25-ը ներառյալ:

2. ***Նորայր Միքայելյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության մանկաբարձական բաժանմունքի պետ ***Սլավիկ Օհանյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թվականի հոկտեմբերի 8
ք. Հրազդան